# ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ[1]

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

Արտաշեսյան թագավորությունը (մ. թ. ա. II—I դարերը) անկասկած պետական կազմավորում էր։ Այն համեմատաբար զարգացած հելլենիստական միապետություն էր, որին ընդհանուր առմամբ հատուկ էին պետության հիմնական հատկանիշները՝ հասարակության դասակարգային կառուցվածքը, տերիտորիալ բաժանումը, բնակչության զանգվածից անջատված զինված մշտական ուժը, իշխանության օրգանների՝ պաշտոնեության առկայությունը. հարկերը։

Պետական բնույթ ուներ նաև Երվանդունիների թագավորությունը (մ. թ. ա. IV—II դարեր), որը վաղ հելլենիստական տիպի միապետություն էր։ Նույնիսկ սկզբնաղբյուրների սակավաթվության պայմաններում հնարավոր է պարզել Հայաստանի հասարակության դասակարգային էությունը, ինչպես նաև պետական ուժեղ իշխանության առկայությունը նշված ժամանակաշրջանում։

Այս մի քանի հետևությունները, որոնց վերջին տարիներին հանգել է հայագիտությունը, այժմ թույլ են տալիս հայկական պետականության սկզբնավորումը որոնելու հիշատակված թագավորություններին նախորդող դարաշրջանում։ Երվանդունիների թագավորությանը Հայաստանում անմիջականորեն նախորդել է աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանը (մ. թ. ա. VI—IV դդ.)։ Հայաստանի հիշյալ դարերի հասարակարգի մի շարք երևույթների՝ մի կողմից հասարակական միավորի՝ համայնքի և մյուս կողմից՝ սատրապային կարգի, սատրապության կառավարման սիստեմի ուսումնասիրումը հատկապես կարևոր է թվում։

Գիտության մեջ երկար ժամանակ տիրապետող էր հայ ականավոր պատմաբան Ն. Ադոնցի տեսակետը, որի համաձայն հույն պատմիչ Քսենոփոնի նկարագրած Հայաստանի գյուղերը տոհմային համայնքներ էին, իսկ հիշատակված գյուղապետերը (կոմարխները)՝ տոհմի առաջնորդներ, տոհմապետեր[2]։ Պատահական չէ, որ Ն. Ադոնցը իր հին հայկական համայնքի բնույթի մասին արտահայտած եզրակացությունները տարածեց նաև ամբողջ հին հայկական հասարակարգի վրա, համարելով այն տոհմատիրական, ընդհուպ մինչև Տիգրան II-ի ժամանակաշրջանը[3]։

Հին Հայաստանի հասարակության և համայնքի բնույթը հնացնող այդ տեսակետը ենթարկվեց վերանայման։ Անդրադառնալով հին հայկական գյու-

---

1 Կարդացվել է Հին Արևելքի պատմության, մշակույթի և բանասիրության համամիութենական կոնֆերանսում (Մոսկվա, 1966, փետրվար)։

2 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Петербург, 1908, էջ 390—391։

3 Н. Адонц, նույն տեղում։ Ինքնին հասկանալի է, որ ֆեոդալիզմ կամ տոհմատիրական կարդեր տերմինների տակ Ն. Ադոնցը չի հասկանում արտադրության որոշակի եղանակ։ Կարևորը այստեղ սակայն այն է, որ Ն. Ադոնցի համար տոհմային կարդերը ավելի հին են, քան ֆեոդալիզմը։

ղերի հասարակական կազմակերպման հարցերին, Ս. Տ. Երեմյանը ենթադրել է, որ այդ գյուղերը տնտեսական կապերով միավորված տերիտորիալ բնույթ են ունեցել և հետևաբար դրանք պետք է համարել տերիտորիալ գյուղական համայնքներ[4]։ Քսենոփոնի նկարագրությունից երևում է, որ բացի տներից, անասունները և, հավանաբար, աշխատանքային գործիքները առանձին ընտանիքների մասնավոր սեփականությունն էին (Անաբազիս, IV, 4, 8, 9, 10, 5; 25)։ Առանձին, տնտեսապես անկախ տների, տնտեսությունների ամբողջությունը կազմում էր հասարակական կազմակերպության այն ձևը, որը հայտնի է գյուղական տերիտորիալ համայնք անվան տակ։ Գյուղատնտեսության ուժեղ մասնագիտացումը ուշագրավ երևույթ է քսենոփոնյան Հայաստանի համար։ Խաղողագործության, տեխնիկական կուլտուրաների, բանջարաբուծության, ինչպես նաև ընդհանրապես երկրագործական արտադրանքի վերամշակման զարգացման բարձր մակարդակը, որի մասին վկայում է Քսենոփոնը (Անաբազիս, IV, 4; 9, 13, 5; 25, 26, 27, 30—33), թույլ է տալիս ենթադրելու հողի անհատական տիրակալության և մշակման առկայության մասին, իսկ ամեն տեսակի մթերքների առատությունը տներում՝ անհատական և մասնավոր յուրացման մասին։ Նման վիճակը քիչ է համատեղելի տոհմական համայնքի հետ։

«Ավելի հին համայնքներում, գրում է Կ. Մարքսը, աշխատանքը կատարվում է միասին և ընդհանուր արդյունքը, վերարտադրման համար անհրաժեշտ մասի բացառությամբ, բաշխվում է աստիճանաբար, սպառման պահանջին համապատասխան»[5]։

Հայկական գյուղերի վճարած տարեկան, որոշակիորեն կարգավորված հարկի մասին վկայությունները (Քսենոփոն, «Անաբազիս», IV, 5; 24, Ստրաբոն, «Աշխարհագրություն», XI, 14, 9) նույնպես չեն ներդաշնակում հայկական համայնքների մասին Ն. Ադոնցի ունեցած պատկերացումների հետ։

Վերջապես, Քսենոփոնի ուշագրավ տեղեկությունը գյուղապետի մասին, որն իր ազգակիցներին հանդիպում է իր գյուղից դուրս, այլ գյուղերում (Անաբազիս, IV, 5; 32), բացահայտում է գյուղական, տերիտորիալ համայնքի հիմնական հատկանիշներից մեկը՝ տոհմի տեղախախտումը[6]։

Գյուղական համայնքի առկայության փաստը հին Հայաստանում մեզ մոտեցնում է հին հայկական հասարակության դասակարգային և պետական էության հետ առնչվող հարցերին, թեպետ հայտնի է, որ գյուղական, տերիտորիալ համայնքը հանդես է գալիս դեռևս նախնադարյան-համայնական հասարակության պայմաններում, ճիշտ է նրա զարգացման վերջին փուլում, պետական կարգերին անցման ժամանակաշրջանում, որոնց համար գյուղական համայնքը երկար ժամանակ շարունակում է բնորոշ երևույթներից մեկը մնալ[7]։

---

4 Ս. Երեմյան, Основные черты общественного строя Армении эллинистической эпохи, ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1948, էջ 37—38։

5 К. Маркс, Наброски ответа на письмо В. И. Засулич. К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 19, Москва, 1961, էջ 418։

6 Ф. Энгельс, Марка. К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 19, Москва, 1961, էջ 329 և հտ., Ф. Энгельс, Происхождение семьи, частной собственности и государства, Сочинения, т. 21.

7 К. Маркс, Նշվ. աշխ., էջ 401, 418—419։

Սատրապային կարգերը բնութագրող տվյալները սակավաթիվ են, բայց նրանք թույլ են տալիս տեսնելու սկզբնական շրջանում այդ կարգերի մեջ մի գործոն, որը որոշ չափով խթանում էր երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը։ Աքեմենյան ժամանակաշրջանի սեպագիր վավերագրերի, Եգիպտոսի սատրապ Արշամի արամեերեն նամակների և անտիկ հեղինակների աշխատությունների տվյալները վկայում են աքեմենյան կայսրության սատրապներին և այլ մեծատոհմիկներին պատկանող հողային տիրույթների մի ամբողջ սիստեմի գոյության մասին[8]։ Վերջիններս կառավարվում էին հատուկ պաշտոնյաների, կառավարիչների ձեռքով, իսկ որպես աշխատող ուժ օգտագործվում էին ստրուկները կամ աղքատացած համայնականները։ Բացառված չէ, որ Հայաստանի սատրապները, որոնք Օրոնտես-Երվանդ տոհմական անունն էին կրում, Հայաստանում իրենց տիրույթներն ունեին։ Քսենոփոնը հիշատակում է գյուղերով շրջապատված կամ առանձին գյուղում կանգնած երկու ապարանքամրոց (παράδεισα), որոնք պատկանել են սատրապին կամ նրա ենթակային (Անաբազիս, IV, 4· 2, 7)։ Մյուս սատրապությունների օրինակով (որտեղ որպես կանոն ապարանքի շրջակայքը պատկանում էր ապարանքի տիրոջը՝ հենց իրեն սատրապին կամ մեկ այլ մեծամեծի) կարելի է ենթադրել, որ Հայաստանում հիշատակված ապարանք-ամրոցների շուրջը գտնվող գյուղերը իրենց հողերով հանդերձ պատկանում էին Հայաստանի սատրապին։

Երվանդ սատրապի Հայաստանում ունեցած տիրույթների մասին ադոտ տվյալներ են պահպանվել նաև հայ միջնադարյան աղբյուրներում, որոնք հիշատակում են Երուանդունիք կամ Արուանթունի գավառը Վան քաղաքի մերձակայքում։ Անկասկած է, որ այս գավառի անունը ծագում է Հայաստանի սատրապների և թագավորների Երվանդ անունից։ Հետևաբար շատ հավանական է, որ սատրապության գլխավոր կենտրոնի՝ Վանի մերձակայքում, Շամիրամի ուրարտական ջրանցքի ոռոգման ոլորտի մեջ մտնող տերիտորիայում, որը վաղուց հայտնի էր բարձր զարգացած երկրագործությամբ[10], գտնվում էր սատրապի գլխավոր տիրույթը, որը հետագայում հայտնի դարձավ Երուանդունիք անվան տակ։ Կայսրության սատրապների տիրույթների օրինակով կարելի է ենթադրել, որ սատրապության տնտեսապես ամենաառաջավոր շրջանում կիրառվում էր նույնիսկ ստրկական աշխատանք։ Անտիկ պատմագիրների տեղեկություններից երևում է, որ սատրապներին կից կային մի շարք պաշտոնյաներ, որոնք արտոնյալ դիրք էին գրավում հասարակության կյանքում, աքեմենյան արքունիքում ծառայողների նմանությամբ։ Քսենոփոնը Հայաստանում հիշատակում է ենթաշրջանի կառավարիչ Տիրիբազոսի հացարարներին և մատուակներին (Անաբազիս, IV, 4; 21)։ Նման պաշտոնյաների

---

8 И. Дьяконов, Рабовладельческие имения персидских вельмож, «Вестник Древней Истории» (այսուհետև՝ ВДИ), 1959, № 4, էջ 70 և հտ.։ М. Дамдамаев, Чужеземные рабы в хозяйствах ахеменидских царей и их вельмож (Доклад на XXV международном конгрессе востоковедов), Москва, 1960, էջ 3 և հտ.։ Նույնի՝ Контракты о сдаче в наем скота, принадлежавшего сатрапу Аршаму (Проблема социально-экономической истории Древнего Мира), Москва—Ленинград, 1963, էջ 130 և հտ.։

9 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կ. Պոլիս, 1852, էջ 221։ «Աշխարհացոյց», Յաղագս մեծին Հայոց, տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 109 և 52։ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 315—316, 321։

10 Н. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 15, 53

կշիռ կայսրության վաղ ժամանակաշրջանի սոցիալական կյանքում նշանակալից է եղել։ Համեմատական նյութերից մեզ հայտնի են հողային առանձին տիրույթներ, որոնք պատկանում էին մատովակների պետերին[11]։

Սատրապության դպիրի պաշտոնը նույնպես կարևոր էր։ Սատրապային գրասենյակի գոյության մասին աքեմենյան Հայաստանում որոշ ակնարկներ կան սկզբնաղբյուրներում (Դիոդոր Սիկիլիացի, «Պատմական գրադարան», XIX, 23)։ Վերջապես սատրապության զինվորական կազմակերպությունը օժանդակում էր ռազմական, ծառայող ավագանութվի բազմապատկմանը։ Պետք է կարծել, որ այս ավագանին նույնպես օժտված էր հողային տիրույթներով։

Մ. թ. ա. VI—IV դդ. հասարակարգի բնույթի գնահատման հարցին պատմական ճիշտ մոտեցում ցուցաբերած լինելու նպատակով խիստ անհրաժեշտ է քննության առնել սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական փուլերը Հայկական լեռնաշխարհում, սկսած հնագույն ժամանակաշրջանից, առնվազն գույքային և իրավական տարբերության ծագումից։

Մինչև վերջերս Հայաստանի հնագետները այն կարծիքին էին, որ գույքային և իրավական անհավասարության սկիզբը Հայկական լեռնաշխարհում պետք է փնտրել մ. թ. ա. II հազարամյակում[12]։ Սակայն մի շարք հետաքրքիր փաստերի համակողմանի ուսումնասիրումից երևում է, որ վերոհիշյալ պրոցեսի սկիզբը կարելի է դնել ոչ թե II, այլ III հազարամյակում։

Ցեղի շարքային անդամներից առանձնացված ցեղային առաջնորդի՝ տարբերիչ հատկանիշներով օժտված (քարե գերեզներ, պղնձե դանակներ)[13], ինչպես նաև գույքային անհավասարության առաջին ապացույցները պարունակող դամբարանաբլուրներ հայտնաբերվել են Լեռնային Ղարաբաղում[14], Միլի տափաստանում և Թրիալեթիում[15] և թվագրվում են III հազարամյակով։

Նույն ժամանակաշրջանով են թվագրվում այժմ մի շարք ամրացված բնակավայրերի, կիկլոպյան ամրոցների առաջացումը[16], ինչպես նաև այդ հանգամանքը պայմանավորող և ուղեկցող հասարակական երևույթները՝ միջցեղային գույքային անհավասարությունը, անասունների, արոտավայրերի և գերիների համար մղվող պայքարը[17]։

Անասնապահության, որպես տնտեսության առաջատար ձևի զարգացման սկիզբը[18] նույնպես կարելի է տանել III հազարամյակ։

Նշված ժամանակաշրջանում հասարակական հարաբերությունների բարդացման մասին են վկայում նաև V—IV հազարամյակով թվագրվող բնակավայրի (Էջմիածին, Ռ. Թորոսյանի պեղումները) մի սենյականոց կացարան-

[11] Ի. Дьяконов, նշվ. աշխ., էջ 73, ծանոթ. 10։

[12] Б. Пиотровский, Археология Закавказья, Ленинград, 1949, էջ 43; Э. Ханзатян, Культура древнейших племен Армянского нагорья (III тысячелетие до н. э.). Автореферат кандидатской диссертации, Ереван, 1964.

[13] Այս մասնամասնությունների վրա մեր ուշադրությունը հրավիրեց հնագետ Ս. Սարգսյանը։

[14] Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 67—68

[15] Б. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, էջ 101 և հտ., А. Нессен, Раскопки большого кургана в урочище Уч-тепе, «Материалы и исследования по археологии СССР», № 125, Москва—Ленинград, 1965, էջ 153 և հտ.։

[16] Ս. Սարգսյան, Կ. Ղաֆադարյան, Ծամշադինի մի քանի կիկլոպյան ամրոցների մասին, «Տեղեկագիր», 1965, N 11, էջ 82։

[17] Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 43, 56—57։

[18] Նույն տեղում, էջ 36։

ներին հաջորդող բաղմասենյակ տները (Շենգավիթ)[19], որոնք կապվում են մեծ ընտանիքային պատրիարխալ համայնքի առաջացման հետ[20]։ Վերջապես մեծ տեղաշարժեր են նկատվում III հազարամյակում մետաղամշակման բնագավառում, պղնձի ձուլման տեխնիկայի արմատավորման, ինչպես նաև նոր՝ պղնձի և մկնդեղի, մկնդեղի բրոնզե ձուլվածքի պատրաստման կապակցությամբ, մի հանգամանք, որը նշանակալից երևույթ հանդիսացավ Հայկական լեռնաշխարհի նյութական արտադրության մեջ[21]։

Երկրորդ հազարամյակը Հայկական լեռնաշխարհում նշանավորվում է նախորդ ժամանակաշրջանում սկզբնավորվող, վերը հիշատակված երևույթների ուժեղացմամբ։ Անասնապահությունը դառնում է տնտեսության հիմնական ճյուղ, իսկ գույքային անհավասարությունը ավելի ակնբախ, կիկլոպյան ամրոցների առաջացումը համատարած է, պատրիարխալ համայնքների ձևավորումը վերջնական։

Անասունների մասնավոր սեփականության հիման վրա սկսվում է դասակարգային հարաբերությունների սաղմնավորման պրոցեսը[22]։

Քննության առնված ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում ձևավորվում են բազմաթիվ ցեղային միություններ, որոնցից մի մասը ժամանակի ընթացքում վերաճեց պետական բնույթ ունեցող կազմավորումների։

Թրիալետի հարուստ դամբարանադաշտերը հանդիսանում են այդ տերիտորիայում II հազարամյակում գոյություն ունեցող ցեղային միությունների առաջնորդների թաղումներ[23]։ Բացի Կիրովականում հայտնաբերված, II հազարամյակի առաջին կեսով թվագրվող նյութերից, կարելի է ասել, որ այս շրջանում էր գտնվում մի այլ ցեղային միություն[24]։ Իրենց հասարակական զարգացման տեսակետից հիշյալ ցեղային միությունները հավանաբար ռազմական դեմոկրատիայի վաղ փուլում էին գտնվում[25]։ Գույքային ընդգծված անհավասարության պատկերն է բացվում Լճաշենի և Արթիկի պեղումների շնորհիվ[26]։ Լճաշենի ցեղային ավագանու հարուստ թաղումները նույնպես վկայում են XIII—XII դարերում Սևանա լճի հյուսիս-արևմտյան շրջանում գոյություն ունեցող խոշոր ցեղային միության մասին, որը զգալի չափով առաջադիմել էր իր սոցիալական զարգացման ճանապարհին։

Մի քանի ցեղային միությունների հանդիպեցին առաջխաղացող ուրարտացիները VIII դարի կեսին, Սևանա լճի ափերին։ Այս միություններից

---

19 Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 32։

20 В. Массон, Средняя Азия и Древний Восток, Москва-Ленинград, 1964, էջ 320 և հտ.։

21 А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 24, 47. Э. Ханзадян, նշվ. աշխ., էջ 12—16։ К. Кушнарева, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 273։

22 Б. Пиотровский, Роль развития земледелия и скотоводства в образовании классов и государства (ձեռագիր), էջ 9 և հտ.։

23 Б. Пиотровский, Археология Закавказья, էջ 44—45։

24 Նույն տեղում, էջ 47—48։

25 Г. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 162։

26 Հ. Մնացականյան, Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 95 և հտ.։ Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963։

մեկը ուրարտական արձանագրություններում հիշատակվում է որպես Վելիքուխի երկիր և ինչպես երևում է հնագիտական հարուստ և բազմատեսակ նյութերից, այն ապրում էր նախնադարյան-համայնական կարգերի պայմաններում, բայց արդեն այդ կարգերի քայքայման փուլում[27]։ Տոհմատիրական կարգերին հատուկ քաղաքական տրոհվածության պատկեր են ուրվագծում ուրարտական արձանագրությունները էտիունիում՝ Կարսից մինչև Սևանա լիճը տարածվող, այս հավաքական անուն կրող տերիտորիայում[28]։

Ասորեստանյան և ուրարտական արձանագրությունները հիշատակում են մի նշանակալից միավորում Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում, Ճորոխի հովտում։ Դա Դայաենի, Դիաուխի երկիրն է, հայկական Տայք նահանգը, որտեղ արդեն XII դարում վկայակոչվում է մի խոշոր ցեղային միություն։ Ուսումնասիրողների կարծիքով Տայքի ցեղային միության մեջ իր զարգացման ընթացքում հանգես են գալիս պետականության որոշ սաղմեր[29]։

Մի շարք տվյալներից երևում է, որ II հազարամյակի առաջին կեսից սկսած Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հարավային շրջանների բնակչությունը ներգրավված էր Հին Արևելքի նշանավոր թագավորության՝ Միտանիի պետականության ոլորտը, որի հետ նա կապված էր նաև էթնիկապես[30]։ Այս ժամանակաշրջանում խուրրիական ցեղեր էին ապրում ինչպես Հյուսիսային Միջագետքում, Միտանիի թագավորության բուն տերիտորիայում, այնպես և Հայկական լեռնաշխարհում։ Շատ հավանական է հետևապես, որ դասակարգային հասարակության և պետության կազմավորման պրոցեսը առաջադիմել էր Վանա և Ուրմիա լճերի միջև ընկած տարածություններում ապրող ցեղերի միջավայրում։

Որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ Միտանիի թագավորության կազմալուծման ժամանակից սկսած (մ. թ. ա. XV դ.) ձևավորվում են խուրրիական և ուրարտական պետական միավորումներ՝ Խուրրի թագավորությունը Վանա լճի շրջանում և Ուրուատրին՝ Վերին Զաբի վերին և միջին հոսանքի շրջանում[31]։ Այստեղ գտնվող Մուսասիրը համարվում է ուրարտական ցեղերի քաղաքական և կրոնական հնագույն կենտրոնը[32]։

XIII դարում սակայն այս միավորումները դադարեցին գոյություն ունենալուց։ Նրանք կործանվեցին ասորեստանցիների հարվածների տակ և բաժանվեցին։ Սալմանասար I-ը (մ. թ. ա. 1280—1260) հիշատակում է ութ առանձին երկրներ, որոնք միավորված էին մի ընդհանուր՝ Ուրուատրի անվան տակ։ Այստեղից երևում է, որ XIII դարի առաջին կեսում, արդեն նախկին պետական միավորումը իր տեղը զիջել էր ցեղային միությանը[33]։ Ուրարտական նամակների և վավերագրերի ուսումնասիրություններից նույնպես երևում է, որ այժմ ուրարտական պետականության առաջացման հարցը ենթակա է վերա-

---

27 Ս. Բարխուդարյան, Վելիքուխի երկիրը. Նյութեր Հին Հայաստանի պատմության, Երևան, 1935, էջ 192 և հտ.։

28 Г. Меликишвили, Наири—Урарту, Тбилиси, 1954, էջ 56—57։

29 Նույն տեղում, էջ 249 և հտ.։

30 Նույն տեղում, էջ 93 և հտ.։

31 Նույն տեղում, էջ 148 և հտ.։ Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 49։

32 Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 159 և հտ.։

33 Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 43։

նայման և որ պետականության սկզբնավորումը պետք է փնտրել II հազարամյակում[34]։

XIII դարից՝ խուրրի-ուրարտական խոշոր միավորումների կործանումից հետո, մինչև IX դարը չենք հանդիպում քիչ թե շատ նշանակալից քաղաքական կազմավորումների։ Հայկական լեռնաշխարհի տերիտորիան զբաղեցվում էր բազմաթիվ ցեղային մանր միավորումներով։ Ասորեստանի թագավորները հիշատակում են այստեղ նաիրյան տասնյակ երկրներ և թագավորներ[35]։

Սակայն I հազարամյակի սկզբներին ուրարտական պետության կազմավորման պրոցեսը կրկնվում է նոր պայմաններում նաիրյան ցեղերի միջավայրում։ Այս ցեղերի սիստեմատիկ պատերազմները Ասորեստանի դեմ, միջցեղային պայքարը գերիշխանության համար մ. թ. ա. IX դարում հանգեցրին ուրարտական պետության կազմավորմանը[36]։

Հայկական լեռնաշխարհի հիշատակված բազմաթիվ միավորումները անկախ նրանից, թե նրանք ցեղային միություններ էին կամ պետական բնույթ ունեին, անկասկած որոշակի դեր խաղացին հայ ժողովրդի կազմավորման գործում։ Այդ միավորումների բնակչության լեզվի, մշակույթի և մարդաբանական տիպի ժառանգորդը հանդիսացավ հայ ժողովուրդը։ Ուշադրության արժանի է նաև այս միավորումների սոցիալ-տնտեսական հաստատությունների ազդեցության հարցը հին հայկական հասարակարգի վրա, թեպետ որոշակի բան ասել այդ մասին առայժմ հնարավոր չէ։

Մեր տրամադրության տակ եղած գրավոր աղբյուրների տվյալների համաձայն հին հայկական պետության կազմավորման գործում հատկապես մեծ դեր է հատկացվում Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան ծայրամասերում տեղադրվող երկու միավորումներին՝ Հայասա-Ազզիին և Արմե-Շուպրիային։

Հայասա-Ազզի երկրի հասարակության զարգացման մակարդակի մասին մի քանի տվյալներ են հայթայթում հեթիթական արձանագրությունները, որոնք որոշ չափով արտացոլում են այս երկրի սոցիալական կյանքի առանձնահատկությունները։

Հայասա երկրի ղեկավարների մասին խոսելիս հեթիթական արձանագրությունները որպես կանոն հիշատակում են ոչ թե թագավորներին, այլ առաջնորդներին, որոնք ինչպես հայտնի է կանգնած էին ցեղային միությունների գլուխը։ Առաջնորդների հետ միասին արձանագրություններում հիշատակվում են «Հայասայի ժողովուրդը», «Հայասայի մարդիկ», ապա՝ «Հայասայի ավագները». կա հիշատակություն զուգահեռ երկրորդ առաջնորդի գոյության մասին։

Այս ամենը ակնարկում են այն մասին, որ Հայասա երկրի բնակչությունը դեռ լրիվ դուրս չէր եկել զարգացման նախնադարյան-համայնական փուլից։ Առաջնորդը սուվերեն իշխանություն չուներ, այլ բաժանում էր այն ավագների ժողովի կամ ժողովրդի հետ[37]։

---

[34] И. Дьяконов, Урартские письма и документы, Москва—Ленинград, 1963, էջ 20, 23, 25։

[35] Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 43 և հտ.։

[36] Նույն աեղում, էջ 57։ Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 188 և հտ.։

[37] Г. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван, 1947, Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 81 և հտ., Л. Барсегян, Из истории древнейших племенных союзов армянского нагорья в XV—XIII вв. до н. э. (Хайаса—Аззи). Автореферат кандидатской диссертации, Ереван, 1964.

Հայասայում հասարակության զարգացման որոշակի մակարդակի մասին կարելի է դատել նաև այնտեղ տիրող ազգակցական կապերի հնամենի սիստեմի հիման վրա։ Մի պայմանագրի տեքստից երևում է, որ հայասական ավազանու միջավայրում ընդունված էր հարազատ քրոջ կամ մերձավոր ազգակցուհիների հետ կնքված ամուսնությունը, որն արգելված էր հեթիթների մոտ[38]։ Այս տվյալների մեջ կարելի է տեսնել վկայություն զույգամուսնության սիստեմի գոյության մասին, որը բնականաբար ակնարկում է հասարակական հարաբերությունների թերզարգացման մասին։

Այնուհանդերձ, աղբյուրներից երևում է, որ հայասական միջավայրում տոհմատիրական կարգերը բռնել էին քայքայման ուղին։ Առանձին առաջնորդներ արդեն ժառանգական իշխանություն ունեին և որոշ իրավասություններով էին օժտված[39]։

Հեթիթական թագավորության անկումից հետո դժբախտաբար դադարում են ամեն տեսակի տեղեկություններն այս երկրի մասին, որը հավանաբար նշանակալից դեր է խաղացել հայ ժողովրդի կազմավորման գործում։ Հնարավոր է, որ Սուխմի երկրում, որը ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում է մոտավորապես նույն տեղում, ինչ որ և Հայասան, ուժեղանում է հայկական ցեղերի էթնիկական համախմբման պրոցեսը[40]։ Այդ պրոցեսը ըստ երևույթին կապված էր հանդես եկող հնդեվրոպական ցեղերի նոր ալիքի հետ, որի կենտրոնը դարձավ Հայասայից և Սուխմիից հարավ ընկնող Շուպրիա երկիրը։

Հնդեվրոպական ցեղերի նոր ալիքի երևան գալը այժմ որոշակիորեն առնչվում է Թիգլաթպալասար I-ի իշխանության տարիների հետ (մ. թ. ա. 1117—1071)։ Ասորեստանի թագավորը հիշատակում է ուրումեացիներին, հեթիթական երկրի մարդկանց, որոնք իր թագավորության սկզբում մուտք էին գործել Շուպրիա երկիրը և տեղավորվել այնտեղ, բայց նվաճվել էին ու միացվել Ասորեստանին[41]։ Ուրումեացիներից բացի Թիգլաթպալասարը հիշատակում է նաև Շուպրիա ներթափանցած ուրիշ ցեղերի անունները՝ մուշկերին և կաշկերին (արեշլայցիներին)։ Ինչպես երևում է, ավելի ուշ ժամանակաշրջանի, հիմնականում ուրարտական արձանագրությունների տվյալներից, միայն ուրումեացիներն են, որ իրենց անունը պարտագրեցին Շուպրիա մարզին կամ նրա մի մասին։ Շուպրիան կամ Շուբարտուն, որը այս ժամանակաշրջանում տեղադրվում էր ոչ թե Հյուսիսային Միջագետքում, այլ Հայկական լեռնաշխարհի որոշակի՝ հարավ-արևմտյան մասում, գերազանցապես խուրրիական երկիր էր[42]։

Նման միջավայրում տեղավորված հնդեվրոպական ուրումեացիները աստիճանաբար ձուլեցին տեղական ցեղերի զգալի մասը։

Մ. թ. ա. IX դարում, ուրարտական Ս ենուա թագավորի արձանագրություններում Հայկական լեռնաշխարհի այս հատվածը արդեն կրում է Ուրմե

---

38 N. Adontz. Histoire d'Armenie, Paris. 1946, էջ 29—31։

39 Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 87։

40 Նույն տեղում, էջ 407, 418։

41 И. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту ((այսուհետև՝ АВИИУ). ВДИ. 1951. № 2—4 (11—13). Ս. Երեմյան, Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3, էջ 59 և հտ.։

42 Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 90։

անունը, իսկ մ. թ. ա. VIII դարում՝ Սարդուր II-ի արձանագրություններում՝ Ուրմե անունը[43]։

Ուրարտական արձանագրությունների Ուրմե կամ Արմե երկրի նույնացումը ասորեստանյան արձանագրությունների Շուպրիա երկրի, կամ գոնե նրա մի մասի հետ, այժմ կարելի է ապացուցված համարել[44]։ Հայ միջնադարյան տոպոնիմիկայի տվյալների օգնությամբ որոշվում են Արմե-Շուպրիտ երկրի հյուսիսային և հարավային սահմանները՝ Սասնա լեռներում և Արևմտյան Տիգրիսի վրա։

Թեև Արմե-Շուպրիան մտնում էր Ասորեստանյան տերության սահմանների մեջ, այն հաճախ ինքնուրույնանում էր։ Դրանով պետք է բացատրել Շուպրիա երկրի հաճախակի հիշատակումը ասորեստանյան թագավորների հաղորդագրություններում[45]։ Մ. թ. ա. IX դարում Արմե-Շուպրիա երկրի համար մի նոր թշնամի է հանդես գալիս հանձինս Ուրարտուի։ Ուրարտական թագավորները ձեռնարկում են բազմաթիվ փորձեր նվաճելու այդ երկիրը, սակայն միշտ հանդիպում են համառ դիմադրության։ Մ. թ. ա. 673 թ. մի մեծ արշավանք է կազմակերպում դեպի Արմե-Շուպրիա երկիրը Ասորեստանի թագավոր Ասարխադոնը։ Ճիշտ է, Արմե-Շուպրիան նվաճվեց, բայց VII դարի կեսերին նա այլևս հանդես չի գալիս Ասորեստանյան տերության ցուցակներում։ Հավանաբար այս ժամանակաշրջանում Արմե-Շուպրիան լիակատար անկախություն էր ձեռք բերել[46]։

Ասորեստանյան արձանագրությունները սահմանափակ, բայց հետաքրքրական տեղեկություններ են պարունակում հայ-խուրրիական այս միավորման սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին։

Շուպրիայի նվաճման կապակցությամբ Ասարխադոնը հիշատակում է արհեստավորներին, երկրագործներին, այգեգործներին, հովիվներին, որոնց նա այս երկրից քշել-տարել է Ասորեստան[47]։ Այս տեղեկությունները հաստատում են մեր գիտելիքները Արմե-Շուպրիայի տնտեսության բազմաճյուղության մասին, նրա որոշակի մասնագիտացման մասին[48]։

Հատկապես կարևոր է թվում արհեստավորների, երկրագործների և այգեգործների հիշատակումը, մի հանգամանք, որը խոսում է տվյալ հասարակության զարգացման համեմատաբար բարձր մակարդակի մասին։ Հետաքրքրական են նաև Արմե-Շուպրիայի զորքերի տեսակների միջև գոյություն ունեցող ուժեղ մասնագիտացման մասին վկայող տվյալները։ Ասարխադոնը թվարկում է թիկնապահների գնդի մարտակառքերի վարորդներին, ձիավորներին, ապա։ զորքի մարտակառքերի վարորդներին և մարտիկներին, սակրավորներին, վահանակիրներին, հետախույզներին, ինչպես նաև բազմաթիվ հրամանատարներին[49]։ Սրանցից բացի թագավորը հիշատակում է նաև Արմե-Շուպրիայից գերեվարած մնացած բնակչության մասին, որը «որպես մանր անասուն»

43 Նույն տեղում, էջ 245, 248։
44 Նույն տեղում, էջ 52։
45 ԱՎՍՍՍՍ, № 18, 22—25, 28 և այլն։
46 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 72։
47 ԱՎՍՍՍ № 67к.
48 Ս. Արտյոնյան, նշվ. աշխ., էջ 69—70, 116—117, 167—168։
49 ԱՎՍՍՍ № 67к.

բաշխվել էր Ասորեստանի թագավորական դղյակների միջև և հանձնվել նրանց շուրջը ապրող մեծամեծներին[50]։

Արմե-Շուպրիայում ուրվագծվող դասակարգային շերտավորման տեսակետից հետաքրքիր կլիներ գերեվարած այս բնակչության մեջ տեսնել հասարակության ստորին խավերը, ստրուկներին և ազքատացած հոմայնականներին։

Ասարխադոնի արձանագրություններում հիշատակվում են Արմե-Շուպրիայի թագավորի և նրա որդիների անունները, որոնք խուրրիական կերպար ունեն[51]։

Այս բոլոր տվյալները աներկրա կերպով վկայում են զարգացման համեմատաբար բարձր մակարդակի վրա գտնվող հասարակության մասին։ Այդ մակարդակի ստեղծմանը անկասկած նպաստում էր նաև հին արևելյան հարևան տերությունների՝ Ասորեստանի և Ուրարտուի որոշակի ներգործությունը, որը արագացնում էր սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացումը։

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ մ. թ. ա. VII դարի վերջերին Արմե-Շուպրիան գտնվում էր պետականության գոյացման շեմքին, կամ գուցե արդեն վեր էր ածվել պետական կազմավորման։ Սակայն ասորեստանյան նույն արձանագրություններում պահպանված տվյալները պետք է զգուշացնեն Արմե-Շուպրիայի հասարակության զարգացման աստիճանը գերագնահատելուց անկացող ուսումնասիրողին։ Խոսքը Ասորեստանի թագավորների հաճախ կրկնվող վկայությունների մասին է՝ Արմե-Շուպրիա փախչող ասորեստանցիների մասին։ Փախստականների վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել IX դարի թագավոր Ասսուրնազիրպալի արձանագրություններում[52]։ Փախստականներ են հիշատակվում նաև Սարգոն II-ին ուղղված նամակներում[53]։ Հատկապես հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ասարխադոնը՝ Արմե-Շուպրիայի նվաճման պատմության կապակցությամբ[54]։

Պետք է ի նկատի ունենալ, որ փախստականների որոշակի մասը ապաստան էր փնտրում Արմե-Շուպրիայում քաղաքական պատճառներից դրդված։ Ասարխադոնը հիշատակում է ասորեստանցի հրամանատարներին, մարզի կառավարիչներին, վերակացուներին, պետերին, որոնք փախել են Շուպրիա[55]։ Հավանաբար Արմե-Շուպրիայում ապաստան գտան Սինախերիբի հայրասպան որդիները[56]։

Մյուս կողմից արձանագրությունները հիշատակում են փախստականների, որոնք քիչ ընդհանուր բան ունեն վերևում թվարկվածների հետ և որոնք սոցիալական առանձնահատուկ կատեգորիա էին կազմում։ Ասարխադոնը այս մարդկանց անվանում է ավազակներ, գողեր, մեղապարտներ, արյուն թափողներ[57]։ Ինչպես հայտնի է, սովորաբար այդպես էին բնութագրվում ստրուկ-

---

50 АВИИУ № 67к.
51 АВИИУ № 67ж.
52 АВИИУ № 23 (И, 2).
53 АВИИУ № 50 (32).
54 АВИИУ № 67.
55 АВИИУ № 67а.
56 АВИИУ № 62.
57 АВИИУ № 67а.

ներր։ Արձանագրության հաջորդ տողերում թագավորը տալիս է ավելի որոշակի բնորոշումներ։ Նա հականե հանվանե թվարկում է ստրուկներին և իրենց տերերին թողած փախստականներին, որոնց ի նշան պատժի ղրկեց աչքերից, քթից ու ականջներից և վերադարձրեց տերերին[58]։

Բերված տվյալները վկայում են ասորեստանյան հարկատու բնակչության տարբեր պարտավորություններ կրող մարդկանց, աղքատացած համայնականների և ստրուկների փախստի մասին։

Եթե սպանված թագավորի որդիների կամ տարբեր տեսակի հրամանատարների և պետերի փախուստը կարելի է բացատրել քաղաքական պատճառներով, ապա այս դեպքում գործ ունենք այլ կարգի երևույթների հետ։ Սա իսկական փախուստ է դասակարգային կեղեքումից, դասակարգային շահագործումից, այսինքն սա դասակարգային պայքարի պասսիվ ձևերից մեկն է։ Այս հանգամանքը կարևոր է ոչ այնքան Ասորեստանի սոցիալական պատմության համար, որը հնարավոր է բնութագրել այլ աղբյուրների օգնությամբ ևս, որքան Արմե-Շուպրիայի ներսում տիրող սոցիալական հարաբերությունների ճիշտ իմաստավորման համար։ Այս կապակցությամբ հատկապես մեծ նշանակություն են ստանում նույն Ասարխադոնի վկայությունները Արմե-Շուպրիայում՝ Ուրարտուից եկած բազմաթիվ փախստականների առկայության մասին[59]։

Այս վկայության հիման վրա, որը ակնբախորեն ձայնակցում է ասորեստանյան փախստականների մասին վերոհիշյալ տվյալների հետ, պատճառաբանված հետևություն է արվել Ուրարտուի և Ասորեստանի պետական և սոցիալական կարգերի նմանության մասին[60]։ Սակայն տվյալ դեպքում շատ ավելի ուշագրավ է թվում մի այլ հետևություն, որը կարելի է անել մի կողմից՝ Արմե-Շուպրիայի և մյուս կողմից՝ Ասորեստանի և Ուրարտուի զարգացման մակարդակների միջև գոյություն ունեցող ակնհայտ տարբերության մասին։

Ասորեստանում և Ուրարտուում, դասակարգային հարաբերությունների հասունացման, պետականության պայմաններում, որոնք ուղեկցվում էին գյուղական համայնքի ուժեղացող ենթարկվածությամբ և արտադրության միջոցներից զրկված՝ նյութական բարիքներ արտադրողների դասի վերջնական ձևավորումով, դասակարգային շահագործումը հատկապես դաժան ձևեր էր ընդունում։

Արմե-Շուպրիայում, որտեղ հասարակությունը ապրում էր վաղ-դասակարգային տիպի պետության պայմաններում, կամ, ինչ որ նույնպես հավանական է, գտնվում էր պետության վերածվելու եզրին, դասակարգային շահագործումը կիսանահապետական ձևեր էր ընդունում, և հետևաբար այստեղ տիրող պայմանները տանելի էին ասորեստանյան և ուրարտական նույնիսկ շարքային փախստականների համար։ Սարգոն II-ին հասցեագրված մի նամակից հայտնի է, որ Շուպրիայի (կամ Ուրարտուի) թագավորը ասորեստանյան փախստականներին տեղավորեց իր երկրում և «նրանց տրամադրեց դաշտեր, այգիներ և տներ»[61]։ Հավանական է, որ Շուպրիայում նրանք օժտված

---

58 АВПНУ № 67к.
59 АВПНУ № 67, л.
60 Г. Мелкишвили, նշվ. աշխ., էջ 352—353։
61 АВПНУ № 50 (37).

էին ազատ հողագործների իրավունքներով և ունեին իրենց հողն ու արտադրության գործիքները։

Ուրարտուի ու Ասորեստանի և Արմե-Շուպրիայի միջև անցկացված համեմատությունից երևում է, որ վերջինիս համար բնորոշ էր վաղ դասակարգային հասարակությունը, որի մեջ ստրկատիրության զարգացման մակարդակը շատ ավելի ցած եղած պետք է լիներ, քան Ասորեստանում և Ուրարտուում։ Պետականության շեմքին կանգնած կամ հենց նոր, վաղ պետական կազմավորման վերաճած ցեղային միության առկայությունը Արմե-Շուպրիայում վկայում է հայ ժողովրդի կազմավորման նշանակալից պրոցեսների մասին տվյալ և հարևան տերիտորիաներում[62]։ Ինչպես հայտնի է, նախնադարյան-համայնական կարգերի սոցիալ-տնտեսական զարգացման պրոցեսը ուղեկցվում է էթնիկական համախմբման պրոցեսով։

Նշված ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասերում և հատկապես Արմե-Շուպրիայում այդ պրոցեսը տեղի էր ունենում համախմբող միջուկի՝ արմենական ցեղերի՝ տվյալ տերիտորիայի էթնիկական առաջատար տարրի շուրջը։

Մ. թ. ա. VII դարի վերջը և VI դարի սկիզբը նշանավորվեց հին արևելյան երկու հայտնի տերությունների՝ Ասորեստանի և ապա Ուրարտուի կործանումով։

Շատ հավանական է, որ պատմական շրջադարձային նշանակություն ունեցող այս ժամանակաշրջանում Արմե-Շուպրիան հանդես է գալիս որպես ինքնուրույն մի միավոր Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածներում և ակտիվ մասնակցություն է ունենում այդ ժամանակվա ռազմաքաղաքական հիմնական իրադարձություններին։

Ասորեստանի կործանմանը աջակցելուց հետո, Մարաստանի հետ միասին հայերը նվաճեցին Ուրարտուն, որի տեղը հանդես եկավ հայկական թագավորությունը։

Մ. թ. ա. VI դարի հայկական թագավորության և նրան հաջորդած արեմենյան տիրապետության ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի մասին կարելի է ասել հետևյալը[63]։ Սկզբնաղբյուրներում և առաջին հերթին Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ում պահպանված վկայություններից երևում է, որ մ. թ. ա. VI դարում Հայաստանում գոյություն ուներ գույքային և սոցիալական անհավասարություն։ Այժմ ընդհանուր ճանաչում է գտնում այն կարծիքը, որի համաձայն «Կյուրոպեդիա»-ի՝ Հայաստանին վերաբերող տեղեկությունների հիմնական մասը արժանահավատ է համարվում, մանավանդ երբ այդ տեղեկությունները հաստատվում են այլ աղբյուրների տվյալների՝ Քսենոփոնի «Անաբասիս»-ի, Հերոդոտոսի «Պատմությունների», Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և արեմենյան արձանագրությունների օգնությամբ[64]։ Քսենոփոնը հիշատակում է Հայաստանի թագավորին, նրա կնոջը և որդիներին, զորավարներին, առանձին հարուստ հայերին և ընդհանրապես

---

62 Ս. Երեմյան. նշվ. աշխ., էջ 69—71։

63 И. Дьяконов. История Мидии. Москва—Ленинград, 1956. էջ 33—34

64 Ս. Հակոբյան. Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1, Երևան, 1957, էջ 73 և հտ.։

«երևելի հայերին»։ Նա պատմում է թվարկված անձերից ոմանց հարստությունների, դրամական սեփականության մասին։ Ակադ. Մանանդյանի հաշիվներով միայն թագավորը մոտ 12 միլիոն ոսկի ռուբլու արժեքով գումար ուներ[65]։ Նույն ժամանակաշրջանի հայ հասարակության վերնախավի մի շարք ներկայացուցիչների մասին հիշատակություններ կան այլ աղբյուրներում։ Խոսքը գորավարների մասին է (Դադարշիշ, Արտուխաս), սատրապի դռան ծառայողների (մատուակներ, հացարարներ, գուցե դպիր) և այն հայ իշխանավորի մասին, որը թագավորել էր Բաբելոնում (Հալդիտայի որդի Արախին)։

Քսենոփոնը հիշատակում է Հայաստանի արհեստավորներին՝ հյուսներին և քարագործ վարպետներին («Կյուրոպեդիա», III, 2, 11)։ Այս տվյալները հաստատվում են հնագիտական նյութերով։ Հայաստանի ու Վրաստանի տերիտորիայում և մերձսևծովյան մարդի հարավային ափերում աքեմենյան տիպի գեղարվեստական մետաղագործության արտադրանքի հարուստ գյուտերը թույլ են տալիս կարծելու, որ մետաղյա այս առարկաները պատրաստվել են տեղում[66]։ Այս կապակցությամբ կարելի է ենթադրել, որ ուրարտական ժամանակաշրջանի թագավորական կամ տաճարային տնտեսություններին կից աշխատող արհեստանոցները իրենց գործունեությունը շարունակեցին հայկական թագավորության և աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում։ Ուրարտական մետաղյա արտադրանքը մեծ հռչակ էր վայելում և նրան շատ էին նմանվում ավելի ուշ ժամանակի աքեմենյան մետաղագործության նմուշները։

Ուշադրության արժանի են Հայաստանում VI դարում արտաքին և ներքին առևտրի գոյության մասին եղած թռուցիկ ակնարկները («Կյուրոպեդիա», II, 4։ 32, III, 3, 1)։ Դրանք հաստատվում են Հերոդոտոսի հետաքրքիր տվյալներով՝ Հայաստանից Բաբելոն արտահանվող գինու մասին («Պատմություններ», I, 194)։

Մ. թ. ա. VI դարի հայկական թագավորության և ապա հայկական սատրապության քաղաքների գոյության մասին քիչ բան գիտենք։ Սկզբնաղբյուրները («Անաբազիս», աքեմենյան արձանագրությունները) Հայաստանի տերիտորիայում հիշատակում են գյուղեր, ամրոցներ, բնակավայրեր։ Նշված ժամանակաշրջանում Հայաստանում կար երկու կամ երեք քաղաք-նստավայր. երկրի վարչական կենտրոններ Վանը՝ Հայաստանի հարավային և Արինբերդն ու քիչ ավելի ուշ Արմավիրը՝ արևելյան մասերում։

Շատ հավանական է, որ հունական և նույնիսկ իրանական անուն կրող տաճարներից, տաճարային միավորումներից մի քանիսը առաջացել էին վաղ ժամանակներում, բայց թե նրանք ինչ սոցիալական բնույթ ունեին մ. թ. ա. VI—IV դարերում, դժվար է ասել[67]։

---

65 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. 1, Երևան, 1944, էջ 404, ծանոթ. 1։ Որպես հիմք ընդունվել է նախահեղափոխական ոսկի ռուբլին։

66 H. Luschey, Die Phiale, Bleicherode am Harz, 1939, էջ 51, 54։ P. Amandry, Collection Hélène Stathatos, III, Strassbourg, 1963, էջ 270—272։

67 А. Периханян, Храмы и храмовые объединения Малой Азии и Армении, Москва, 1959, էջ 45, ծանոթ. 146, էջ 48, ծանոթ. 163, էջ 147, 148։ N. Adontz, նշվ. աշխ., էջ 381 և հտ.։

Քննության առնված ժամանակաշրջանի հին հայկական հասարակության զարգացման մակարդակը որոշելու տեսակետից կարևոր են նաև դասակարգերի ու պետության կազմավորման համար մեծ նշանակություն ունեցող տնտեսության հիմնական ձևերի՝ երկրագործության և անասնապահության մասին մեզ հասած տվյալները։

Հայաստանում երկրագործության զարգացման բարձր մակարդակի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Քսենոփոնը «Անարազիս»-ում։ Հայկական գյուղերը նկարագրելիս Քսենոփոնը հաճախ ընդգծում է նրանց բարեկեցիկ վիճակը, ամեն տեսակ մթերքների ու պաշարների առատությունը։ Նա հիշատակում է ցորենից և գարուց պատրաստած մեծ քանակությամբ հաց, առանձին ցորեն և գարի, անասունների համար չորացրած խոտ, գարուց պատրաստած գինի, հին անուշահոտ հորած գինիներ, չամիչ, ընդեղեններ, քունջութի, դաոր նշի և բևեկնի յուղ («Անարազիս», IV, 4; 7, 9, 13, 5; 25—27, 31—32)։ Մթերքների այս թվարկումը ակնառու է դարձնում հին Հայաստանի երկրագործության զարգացման համեմատաբար բարձր աստիճանը և նրա բազմաճյուղությունը։ Հացահատիկային բույսերի մշակման կողքին, ինչպես տեսանք, որոշակի փաստեր ունենք խաղողագործության գոյության վերաբերյալ, որի զարգացման աստիճանի մասին են վկայում, ըստ երևույթին, հատուկ մշակման միջոցով պատրաստված պահորակ գինիները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի գինու մի մասը արտահանվում էր։

Ուշագրավ է Քսենոփոնի վկայությունը հին Արևելքում լայն տարածում գտած գարեջրի օգտագործման մասին Հայաստանում։ Ընդեղենի և տեխնիկական կուլտուրաների գոյությունը ևս ապացույց է վերելք ապրող երկրագործության, քանի որ այդպիսի կուլտուրաների մշակումը պահանջում էր մեծ հմտություն և աշխատատար աշխատանք, բայց աչքի էր ընկնում բացառիկ արդյունավետությամբ։ Տեխնիկական կուլտուրաների առկայությունը խոսում է հին Հայաստանում ոռոգման սիստեմի գոյության մասին։ Մ. թ. ա. V—IV դարերի սահմանագլխին Հայաստանի երկրագործության զարգացման պատկերը ձայնակցում է ուրարտական երկրագործության մեզ հայտնի տվյալների հետ[68]։

Զարգացման բավականին բարձր մակարդակի վրա էր գտնվում Հայաստանում նաև անասնապահությունը, բայց երկրագործության տեսակարար կշիռը երկրի տնտեսության մեջ հավանաբար ավելի նշանակալից էր։ Այս օրինաչափ երևույթը Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով մեծ նշանակություն ունի պետության կազմավորման պրոցեսի համար[69]։ Ինչպես արդեն տեսանք, Հայաստանի և Անդրկովկասի բրոնզի դարի հնագիտական նյութը վկայում էր անասնապահության առաջատար դերի մասին II հազարամյակում։ Արտադրողական ուժերի աճը պայմաններ ստեղծեց երկրագործության զարգացման համար, որը աստիճանաբար սկսեց անցնել ոռոգելի հողօգտագործմանը, առաջ եկավ արորը, որի շնորհիվ կարելի էր լայն տարածություններ մշակել։ Երկրագործությունից ստացված ավելցուկը ավելի կայուն դարձավ, և ավելի մեծ, քան այն, որ ստացվում էր անասնապահությունից։ Դասակարգային

---

68 Հ. Արտյունյան, նշվ. աշխ., գլուխ 1-ին և 2-րդ։

69 Б. Пиотровский, Роль развития земледелия и скотоводства в образовании классов и государства, էջ 11 և հտ.։

շերտավորումը ուժեղացավ երկրագործական համայնքներում և տնտեսության մեջ առաջատար տեղը աստիճանաբար անցավ երկրագործությանը։ «Երկրագործությունը կյանքի կոչեց մի դասակարգը մյուս դասակարգի վրա իշխող այն կազմակերպությունը, որն ընդունված է անվանել պետություն»[70]։ Երկրագործության վերելքը, որը վկայակոչում է Քսենոփոնը հայկական ցեղերի միջավայրում, զգալի չափով պայմանավորեց հայկական պետության կազմավորման պրոցեսը։

Հին Հայաստանի հասարակարգի առանձնահատկությունները, նրա տնտեսության զարգացման մակարդակը լավ են դրսևորվում «Անաբազիս»-ում ամենայն մանրամասնությամբ նկարագրված պոնտական ցեղերի սոցիալ-տնտեսական վիճակի հետ անցկացրած համեմատությունից։ Հայերի և պոնտական հասարակարգի մասին Քսենոփոնի հիշատակած տվյալների համադրումից բացահայտվում է այն ակնհայտ տարբերությունը, որը գոյություն ուներ նրանց միջև և օգնում է ավելի լավ ըմբռնել մ. թ. ա. VI—IV դարերի հայկական հասարակության էությունը։

Քսենոփոնի նկարագրությունից լավ երևում է, որ մերձսևծովյան մարզի հարավային ափերի և պոնտական լեռների բնակչությունը ապրում էր նախնադարյան-համայնական կարգերի համար բնորոշ քաղաքական տրոհվածության պայմաններում[71]։ Իրենց ճանապարհի վրա հույները հանդիպեցին այստեղ մի շարք քաղաքական փոքր միավորների, որոնց հիմքը կազմում էին ցեղային միությունները (տաոխների, խալիբների, սկիթինների, մակրոնների, մոսինոյկների)։ Հայաստանում, սակայն, արևելյան Տիգրիսից մինչև Արաքսի վերին հոսանքը և ավելի հյուսիս տարածվող տերիտորիան, Քսենոփոնի վկայությամբ, բնակեցված էր մի ժողովրդով՝ հայերով։ «Անաբազիս»-ի տվյալներից երևում է, որ մերձպոնտական ցեղերի տնտեսության գլխավոր, առաջատար ձևը անասնապահությունն էր[72]։ Նույն երկրամասում երկրագործական կուլտուրաների առկայության մասին եղած կցկտուր տեղեկությունները չեն կարող խախտել ընդհանուր պատկերացումը պոնտական ցեղերի անտեսության մասին և, ընդհակառակը, բնութագրում են երկրագործության ստորադաս վիճակը։ Հայաստանում, սակայն, Քսենոփոնը տեսավ բարձր զարգացած երկրագործություն, որի դերի մասին պետության կազմավորման գործում վերևում ասվեց։ Վերջապես պոնտական ցեղերի ամրացված բնակավայրերի գոյության փաստը, որը ներդաշնակում է Անդրկովկասի տոհմական կարգերի քայքայման ժամանակաշրջանի համար բնորոշ կիկլոպյան ամրոցների հետ, արոտավայրերի, անասունների և գերիների համար միջցեղային ընդհարումները բացահայտող բազմաթիվ ակնարկները և նույն տերիտորիայում ապրող մի շարք ցեղերի հին սովորույթներն ու բարքերը լավ են պատկերում պոնտական բնակչության հասարակարգի նախապետական ցայտուն բնույթը[73]։

Այսպիսով, հայկական պետությանը, որի տնտեսական հիմքը կազմում էր երկրագործությունը և անասնապահությունը, հակադրվում էր հյուսիսա-

70 Նույն տեղում, էջ 11։

71 М. Максимова, Античные города юго-восточного Причерноморья, Москва—Ленинград, 1956, էջ 118 և հտ.։

72 Նույն տեղում։

73 Նույն տեղում։

յին, գերազանցապես անասնապահական ծայրամասը։ Բացառված չէ, որ հայերը իրենց հարևաններից բռնի ուժով նաև անասուններ էին հայթայթում. Հավանաբար այս պրոցեսը պատկերող մի դրվագ պահպանվել է Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ի՝ անասնապահ խալդայների և երկրագործ հայերի վեճը նկարագրող հանրածանոթ հատվածում (III, 2)։ Նորաստեղծ հայկական պետության ծայրամասն էին հանդիսանում, ըստ երևույթին, նաև Հայկական լեռնաշխարհի՝ Արաքսից հյուսիս-արևելք ընկած տերիտորիաները։

Վերջին տարիների հնագիտական աշխատանքների արդյունքներից երևում է, որ այդ տերիտորիայում ուրարտական պետության անկմանն անմիջականորեն հաջորդող ժամանակաշրջանում հասարակության կյանքում որոշ հետադիմություն է նկատվում։ Ուրարտական քաղաքների տերիտորիայում. հենց բնակարանների մեջ տեղադրված ավելի ուշ ժամանակի, մ. թ. ա. V—IV դարերի դամբարանների առկայությունը (օր. Թեյշեբաինիում կամ Նոր Արմավիրում բացված VIII—VII դարերի ուրարտական քաղաքում[74]) վկայում է տվյալ վայրերում քաղաքային կյանքի ժամանակավոր դադարի մասին։ Միայն ուրարտական պաշտամունքային նախկին կենտրոնը Արմավիր-բլուրում, հավանաբար շարունակեց իր գոյությունը պահպանել[75]։

Այն բանից հետո, երբ Երվանդունիները կանգ առան Արմավիր-բլուրի ուրարտական ժամանակաշրջանի միջնաբերդի վրա, որպես մ. թ. ա. IV դարում առաջացած հայկական նոր պետության թագավորական նստավայր, նոր պայմաններ ստեղծվեցին Արմավիրի հելլենիստական քաղաքի զարգացման համար։

Սևանից ոչ հեռու գտնվող, Հրազդանի շրջանի Ջրառատ գյուղում հայտնաբերված կոլեկտիվ թաղման ուսումնասիրությունից երևում է, թե տոհմատիրական կարգերի ավանդները որքան ուժեղ էին մ. թ. ա. V—IV դարերում[76]։ Որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և արևելյան հատվածները նշված ժամանակաշրջանում իրենց սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանի տեսակետից զիջում էին կենտրոնական և հարավային մարզերին, երևում է նաև Հայկական լեռնաշխարհին հյուսիսից և արևելքից հարևան երկրների հասարակության զարգացման մակարդակից. Ինչպես Վրաստանի, այնպես էլ Ազվանքի բնակչությունը այդ ժամանակ ապրում էր նախնադարյան-համայնական կարգերի քայքայման պայմաններում։ Վերջին ուսումնասիրություններից երևում է, որ պետություն Վրաստանում ձևավորվել է մ. թ. ա. III դարի 70-ական թթ.[77], իսկ Ազվանքում՝ մ. թ. ա. I դարում[78]։

---

[74] А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1964, էջ 137 և հտ.։

[75] Հ. Մարտիրոսյանի արտահայտած կարծիքը։ Տե՛ս նաև Ս. Կրկյաշարյան, Դիտողություններ հին հայկական տաճարային քաղաքների առաջացման մասին, «Տեղեկագիր», 1963, № 9, էջ 55 և հտ.։

[76] А. Мнацаканян, Г. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении, «Տեղեկագիր», 1961, № 8, էջ 80։

[77] А. Болтунова, Возникновение классового общества и государственной власти в Иберии. ВДИ, 1956, № 2. Г. Меликишвили, К вопросу о возникновении классового общества и первых государственных образований в Грузии, «Вопросы Истории» 1956, № 4.

[78] К. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, Москва—Ленинград, 1959, էջ 89։

Հայկական պետության սոցիալ-տնտեսական վիճակի առանձին կողմերի հետ ծանոթանալուց հետո անհրաժեշտ է անդրադառնալ այդ պետության քաղաքական ձևին։ Այդ մասին հետաքրքիր, թեպետ սակավաթիվ տվյալներ կան Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ։ Այդ աշխատության համաձայն հին Հայաստանում իշխել են երկու թագավորական դինաստիաներ։ Մեկը Արշակունյաց դինաստիան է, որը, ժամանակագրական ոչ ճիշտ պատկերացումների համաձայն իշխել է մ. թ. ա. II դարից մինչև մեր թ. V դարը։ Մյուսը Հայկազյան դինաստիան է, որը հարատևել է հայ ժողովրդի պատմության սկզբից մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակաշրջանը։ Թագավորական դինաստիաների նման բաժանումից երևում է, որ ըստ Մովսես Խորենացու, կամ իր այդ սխեմայի հիմքում ընկած պատմական ավանդության, Հայաստանում թագավորական դինաստիա կար դեռ նախահելլենիստական ժամանակաշրջանում[79]։ Այս հետևությունը, որը բխում է «Հայոց պատմության» տվյալներից, մեծ նշանակություն ունի քննության առնված հարցի համար, թեպետ «Հայոց պատմության» մեջ պահպանված տեղեկությունները քննական մոտեցման կարիք ունեն։ Եթե հրաժարվելու լինենք կիսաառասպելական անձնավորություններից, որոնք արտացոլում են հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը կամ անձնավորում են հին հայերի պաշտամունքային պատկերացումները (Հայոց պատմություն, I, 10—20) և անտեսենք Հայաստանի իշխանավորների անուններով ծանրաբեռնված ցուցակները (I, 19, 22), որոնք, դատելով անունների լեզվական կերպարից, արտացոլում են պարթևական և հետպարթևական ժամանակաշրջանը[80], ապա «Հայոց պատմության» մեջ հիշատակված վաղագույն առաջին դինաստիայից կմնան մի քանի անուններ, որոնք կարող են արժանահավատ լինել։ Այդպիսի անուններից են՝ Պարույր Սկայորդին, Երվանդ Սակավակյացը և Տիգրան Երվանդյանը (I, 19, 20, 21, 22, 24 և հաջորդ)։ Մենք առիթը ունեցել ենք քննության առնելու «Հայոց պատմության» համապատասխան տեղերը[81]։ Այստեղ սահմանափակվենք շարադրելով հիմնական հետևությունները։ Հայաստանի թագավոր Պարույրի, ինչպես նաև Ասորեստանյան տերության կործանմանը և Նինվեի նվաճմանը նրա մասնակցելու մասին եղած տեղեկությունների քննական ուսումնասիրումը կարող է բացահայտել, ինչպես մեզ թվում է, այդ հատվածի անարժանահավատությունը։ Արդեն այն հանգամանքը, որ Պարույր թագավորը, որը Խորենացու վկայությամբ Սկայորդու՝ այսինքն սկյութացու կամ սակի որդուց էր ծնվել, հիշատակվում է միևնույն ժամանակաշրջանում մի այլ՝ նույն անունը կրող (Պարտատուա, Բարտատուա՝ ասորեստանյան աղբյուրներում, Պրոտոտիոս՝ Հերոդոտոսի պատմությունում), ծագումով ակնհայտ սկյութացի թագավորի կողքին[82], պետք է որ զգուշացնի ուսումնասիրողին։ Ինչպես հայտնի է, այս Պարտատուան սկյութացիների առաջին թագավորն էր, որը

79 Տե՛ս «Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և հին հայկական թագավորական դինաստիաները» մեր հոդվածը աշխատությունը։

80 Н. Дьяконов, История Мидии, էջ 353։

81 Գ. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, «Տեղեկագիր», № 6, 1958, էջ 54—61 և Հ. Ժամկոչյանի «Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում» աշխատության մասին նույնի գրախոսականը, «Տեղեկագիր», 1962, № 4, էջ 89—91։

82 АВПНУ № 68 (19).

հաջորդել է Իշպակային, սկյութացիների առաջնորդին[83]։ «Հայոց պատմության» մեջ Պարույրը նույնպես անվանված է հայերի առաջին թագավոր, մի հանգամանք, որը չի կարելի պարզ զուգադիպություն համարել։ Պետք է հաշվի առնել նաև այն, որ Ասորեստանի կործանման մանրամասնությունները, որին ըստ «Հայոց պատմության» մասնակցել է նաև Պարույրը, քաղված են Դիոդորոս Սիկիլիացու միջնորդությամբ պատմագրի վատ համբավ ունեցող Կտեսիաս Կնիդացուց և այժմ ընդունելի չեն[84]։ Վերջապես, համարյա թե նույն այն ժամանակ, երբ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համաձայն իշխում էին Պարույրը և նրա նախորդները, Արմե-Շուպրիայում հիշատակվում են այլ, խուրրիական անուն կրող թագավորներ[85]։

Միանգամայն տարբեր, հաստատուն հողի վրա ենք գտնվում՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Երվանդի և Տիգրանի՝ Հայաստանի երկու այլ թագավորների մասին եղած տվյալները քննելիս։

Վերոհիշյալները Խորենացու վկայությամբ ժամանակակից էին Մարաստանի Աստիագես և Պարսկաստանի Կյուրոս թագավորներին։ Այս տվյալները, որոնք անսպասելի, բայց լրիվ հաստատում գտան Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատության մեջ[86], բացառիկ կարևոր նշանակություն ունեն հայ պետականության պատմության սկզբնական ժամանակաշրջանի համար։ Այս երկուսը մ. թ. ա. VI դարում առաջացած հայկական պետության առաջին թագավորներն էին։

Սակավաթիվ տվյալները և առանձին ակնարկները որոշ չափով բացահայտում են նրանց իշխանության բնույթը։ Գահի ժառանգման սիստեմը, որի համաձայն իշխանությունը հորից անցնում էր ավագ որդուն, լավ է դրսևորում թագավորական իշխանության ժառանգական բնույթը և ընդգծում տվյալ քաղաքական միավորման պետական էությունը (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, 21, 23։ Քսենոփոն, Կյուրոպեդիա, III, 1, 7, 13, 14, 33)։

Սկզբնաղբյուրների առանձին ակնարկներից երևում է, որ հայոց թագավորը ուներ իսկական կառավարական իշխանություն։ Այդ նույնպես մի նշան է ինքնակալ թագավորի գոյության մասին, որը իր իշխանությունը չէր բաժանում կառավարման այլ մարմինների հետ։ Դեռ ավելին, նա օժտված էր այնպիսի իրավասություններով և առանձնաշնորհություններով, որոնք նրան մի գլխով բարձր են դասում, յուրաքանչյուր՝ նույնիսկ ամենազարգացած ցեղային միության առաջնորդից։

Քսենոփոնի վկայությամբ, հայոց թագավորը մեծ իրավունքներ ուներ քաղաքացիական վարչության բնագավառում և տնօրինում էր իր հպատակների, մեծատոհմիկների կյանքը, ազատությունը և սեփականությունը (Կյուրոպեդիա, III, 1)։ Այսպիսով սուվերեն, ժառանգական թագավորական իշխանության մասին եղած տվյալները ավելորդ անգամ բնութագրում են Ուրարտական պետության տեղը, մ. թ. ա. VI դարում առաջացած հայկական քաղաքական միավորման պետական բնույթը։ Ամփոփելով տեսնում ենք, որ

---

83 И. Дьяконов, История Мидии, էջ 272.

84 Նույն տեղում, էջ 352։

85 АВИИУ № 67ж.

86 Գ. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, «Տեղեկագիր», 1958, № 6, էջ 54—57։

Հին հայկական պետության ծագումը արդյունք էր նախ և առաջ դասակարգային հասարակության ձևավորման այն պրոցեսի, որ տեղի էր ունենում Ուրարտական տերության՝ նախնադարյան-համայնական կարգերի պայմաններում ապրող ծայրամասերի սոցիալ-տնտեսական հարաբերությունների տեսակետից ամենաառաջավոր շրջանում, ապա՝ հայկական ցեղերի միջավայրում տեղի ունեցող երկրագործության զարգացման նոր վերելքի և, վերջապես, ավելի զարգացած հասարակարգ ունեցող հարևան երկրների՝ Ասորեստանի, Ուրարտուի և Մարաստանի ուժեղ ազդեցության։

## ВОЗНИКНОВЕНИЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ГОСУДАРСТВА

Г. А. ТИРАЦЯН

(Резюме)

Зарождение древнеармянской государственности следует отнести к периоду, предшествовавшему армянским царствам Арташесидов (II—I вв. до н. э.) и Еруандидов (IV—II вв. до н. э.).

Ряд фактов показывает, что на территории Армянского нагорья зарождение имущественной и правовой дифференциации следует отнести не ко II, а к III тысячелетию, когда постепенно начинают появляться курганные погребения племенных вождей, циклопические крепости, многокомнатные жилища, заметно возвышается роль скотоводства в хозяйственной жизни общества. Второе тысячелетие характеризуется значительным усилением всех упомянутых явлений, в результате которых происходит процесс образования многочисленных объединений, имеющих вначале племенной характер. Значительные части Армянского нагорья вошли в состав Митаннийского царства (XVII—XIII вв. до н. э.). На Армянском нагорье возникают урартские и хурритские государственные объединения (XV в до н. э.).

Важную роль в образовании древнеармянского государства было суждено сыграть двум расположенным в западных частях Армянского нагорья объединениям: Хайасса-Аззи и Арме-Шуприя. Ассирийские источники выявляют многоотраслевой характер экономики Арме-Шуприя и указывают на наличие в ней классовой дифференциации. Неоднократные упоминания ассирийских, а также урартских беглецов в Арме-Шуприя, ищущих, как правило, убежище от классового гнета, указывают на разительную разницу между уровнем развития общественного строя Ассирии и Урарту, с одной стороны, и Арме-Шуприя, с другой. Последняя, по-видимому, стояла на грани превращения в государство. Она участвовала в событиях, ведущих к разгрому двух древневосточных государств — Ассирии и Урарту. На развалинах урартской державы возникло армянское царство (VI в. до н. э.).

Данные письменных и вещественных источников позволяют говорить об имущественном и социальном неравенстве в армянском обще-

стве VI—IV вв. до н. э. Очень важными являются сведения об основных формах хозяйства — земледелия и скотоводства, роль которых в образовании классов и государства общеизвестна. Высокий уровень развития земледелия, его новый подъем также обусловили процесс образования государства в VI в. до н. э. Политической формой его было царство. Критическое изучение первой книги «Истории Армении» Мовсеса Хоренаци помогает выявить в Армении в VI в до н. э. царскую династию, которую историк именует Айкидской.